ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2025 թվականի № 330-Ա

ՀՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՄԱՐԻՍԻ ԱԶԱՏ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի № 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 1-ի № 366 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 11-ի № 327-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Հրայր Ալիբեկի Սարգսյանին*** 2025 թվականի օգոստոսի 11-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի հուլիսի 24-ի *«Հրայր Սարգսյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* № 301-Ա որոշման 2-րդ կետը:

3. Մինչև վարչատնտեսական մասի համակարգողի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության տնօրեն ***Հրայր Ալիբեկի Սարգսյանին***:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի

մարզի «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 11
ք. Հրազդան